



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

**ՓՈՔՐ ԽՄԲԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՈՒ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ ՔԻՄԻԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ
ԳՈՐԾՆԹԱՑՈՒՄ**

Ենթյան Սուսաննա

Հետազոտող ուսուցիչ՝

անուն, ազգանուն

Բամբակաշատի միջնակարգ դպրոց

.....

դպրոց

Գերբյան Կարինե

Մենթոր ուսուցիչ՝ _____

անուն, ազգանուն

Բովանդակություն

1. Նախաբան	3
2. Գրականության ակնարկ	4
3. Գործնական համատեքստ	12
4. Անփոփում	15
5. Գրականություն	16

Նախաբան

Հասարակության մեջ տեղի ունեցած փոփոխությունները հանգեցրել են ժամանակակից կրթության նպատակների, հետևաբար, նաև ուսուցչի մեթոդական համակարգի բոլոր բաղադրիչների փոփոխության: Ժ.Դելորը 20-րդ դարի կրթության միջազգային հանձնաժողովի զեկույցում ընդգծում է. «Ահա չորս հենասյուններ, որոնց վրա հիմնված է ժամանակակից կրթությունը. սովորել ճանաչել, սովորել անել, սովորել ապրել միասին և սովորել լինել»: Այնուհետև բացահայտում է կրթության այդ չորս բաղադրիչները: «Սովորողն ամեն օր համադրելով ներքին և արտաքին տարրերը պետք է կառուցի սեփական գիտելիք, սովորի ճանաչել, կենտրոնանա գիտելիքների գործնական կիրառության վրա և սովորի ստեղծել, կառուցել, արդիականացնի ցանկացած խտրականությունից հրաժարվելու ունակություն, որ հասարակության մեջ հավասար հնարավորություն ունենան բոլորը ու սովորի միասին ապրել՝ շեշտը դնելով ներուժը զարգացնելու ունակությունների վրա, սովորի լինել»:

Անձի սոցիալական զարգացումը նույնպես պահանջում է որոշակի պայմաններ և ջանքեր: Հայտնի է, որ երեխաները սովորում են արդյունավետ կերպով, եթե նրանք հնարավորություն ունեն հետևել հետաքրքրություններին, կատարել ընտրություն, ակտիվ համագործակցել միմյանց հետ: Խմբային աշխատանքում ուսուցման, կրթության, քննադատական մտածողության կարողությունները սովորողների ակտիվ ուսուցման միջոցով զարգացնելը դաստիարակում է սոցիալապես պատասխանատու անհատներ: Այս կապակցությամբ մշակվում են ուսումնական գործընթացի կազմակերպման նոր, արդիական մոտեցումներ, իրականացվում է երեխաների հետ աշխատանքի նոր մեթոդների և ձևերի ակտիվ որոնում, որը նպաստում է քիմիայի ուսուցման գործընթացում սովորողի սոցիալական հմտությունների զարգացմանը, փոքր խմբում աշխատանքի առավելություններն ու սահմանափակումները ընկալող, բավարարող անհատի ձևավորմանը, ինչով էլ պայմանավորված է հետազոտության մեր կողմից ընտրված թեմայի արդիականությունը: Մեր հետազոտության նպատակն է ուսումնասիրել քիմիայի ուսուցման գործընթացում փոքր խմբերով աշխատանքի առավելություններն ու սահմանափակումները, խմբային աշխատանքի կիրառության ազդեցությունը սոցիալական ունակությունների զարգացման և ճանաչողական գործունեության որակի բարելավման վրա:

Գրականության ակնարկ

Դպրոցն այսօր սրընթաց փոխվում է, փորձում «բայլել» ժամանակին համընթաց, իսկ գլխավոր փոփոխությունը, որն ազդում է կրթության իրավիճակի վրա, զարգացման տեմպերի արագացումն է, այսինքն, դպրոցը պետք է իր աշակերտներին պատրաստի այն կյանքին, որի մասին ինքը դեռևս չգիտի: Ուստի այսօր կարևոր է քիմիայի ուսուցման գործընթացում ոչ այնքան երեխային տալ գիտելիքների մեծ պաշար, որքան ապահովել ընդհանուր անձնական, սոցիալական, մշակութային և ճանաչողական զարգացում, զինել այնպիսի հատկություններով, ինչպես սովորելու կարողությունն է: Քիմիան բարդ առարկա է և թույլ կարողություններ ունեցող սովորողի համար խմբում աշխատելը այն ընկալելու ավելի մեծ շանսեր է տալիս: Դպրոցի խնդիրն այսօր այն աշակերտին դաստիարակելն է, ով կարողանում է ճկուն հարմարվել կյանքի փոփոխվող պայմաններին:

Դպրոցում ուսումնական աշխատանքի կազմակերպման արդյունավետ ձևերից մեկը խմբային աշխատանքն է: Դպրոցականները սիրում են աշխատել խմբերում, միայն պետք է կիրառել աշխատանքի այս ձևը այնքան հաճախ, որքան հնարավոր է: Քիմիայի ուսուցման գործընթացում խմբային աշխատանքի միջոցով հնարավոր է կազմակերպել նոր նյութի ուսումնասիրման, ուսումնական նյութի ամրապնդման, խնդիրների լուծման, գործնական աշխատանքի խմբային դասեր: Փորձը ցույց է տալիս, որ խմբային աշխատանքի նպատակը յուրաքանչյուր աշակերտի ակտիվ ներգրավումն է ուսումնական նյութի յուրացման գործընթացում [2, էջ 96]: Խմբային աշխատանքի ժամանակ են ձևավորվում սովորողի հիմնական սոցիալական կարողունակությունները, ինչպես տեղեկատվությունն ընկալելու, փոխանցելու, վերլուծելու, հաղորդակցվելու, քննարկելու, ուսումնական խնդիրներ բացահայտելու, անդրադառնալու և այլն [6, էջ 268]: Ցածր ուսումնական հնարավորություններով աշակերտները խմբերում ավելի հաճախ են արտահայտվում, քան սովորաբար: Խմբում նրանք չեն վախենում խոսել և հարցնել: Սա վկայում է նրանց ակտիվության բարձրանալու մասին, որը թույլ է տալիս հաջողությամբ ձևավորել գիտելիքներ, սոցիալական կարողություններ և հմտություններ: Ուսուցման խմբային եղանակը մեծ ազդեցություն է ունենում ոչ միայն սովորողի ուսուցման, այլև դաստիարակության վրա: Նրանք, ովքեր միավորվել են նույն խմբում, սովորում են միասին աշխատել,

ընդհանուր լեզու գտնել և հաղթահարել դժվարությունները: Սովորողները սկսում են պատասխանատվություն զգալ իրենց քիչ պատրաստված ընկերների համար, իսկ նրանք փորձում են խմբում ներկայանալ պատասխանատու և բանիմաց: Այսպիսով, քիմիայի ուսուցման գործընթացում փոքր խմբերն իրականացնում են սոցիալական համախմբման, հաղորդակցման և ինքնակազմակերպման գործառույթներ:

Մանկավարժական գրականության մեջ չկա խմբային ուսուցման եղանակների միասնական մոտեցում: Հետազոտողների ճնշող մեծամասնությունը խմբային աշխատանք ասելով հասկանում են փոքր խմբերի աշխատանքը դասարանի ներսում: Նորարար մանկավարժ Ի.Մ.Չերեդովը խմբային աշխատանքը սահմանում է որպես ուսուցման կազմակերպման ձև, որի ընթացքում ուսուցիչը ղեկավարում է դպրոցականների խմբային գործունեությունը [7, էջ 76]: Նշենք, որ սահմանումը պատկերացում չի տալիս խմբերում սովորողների փոխհարաբերությունների բնույթի մասին, սակայն դա կարևոր է, քանի որ եթե հանձնարարությունը կատարելիս երեխաները չեն շփվում միմյանց հետ, ապա խոսքը ոչ թե խմբային, այլ անհատական աշխատանքի մասին է: Վ.Վ.Կոտովը գտնում է, որ խմբային աշխատանքը կոլեկտիվ ուսումնական գործունեության ձև է և այն սահմանում որպես «խմբի կազմում դասի ժամանակ առաջադրված ուսումնաճանաչողական խնդրի լուծման նպատակով աշակերտների համատեղ ջանքերի կազմակերպման միջոց» [5, էջ 100]: Սակայն մեկնաբանությունը չի արտացոլում խմբային աշխատանք կազմակերպելիս ուսուցչի և աշակերտների փոխհարաբերությունների բնույթը, իսկ ուսուցչի և աշակերտների հարաբերությունների առանձնահատկություններում է խմբային աշխատանքի մանկավարժական արդյունավետությունը: Հ.Յ.Լիմեթսը խմբային աշխատանքի մասին հասկացությունը սահմանելիս ելնում է նրանից, որ խմբային աշխատանքի ձևը որոշում է ուսուցչի և աշակերտների, ինչպես նաև սովորողների միջև փոխգործակցության բնույթը. «Խմբային աշխատանքը բնութագրվում է սովորողների միջև անմիջական փոխգործակցությամբ, նրանց համատեղ փոխհամաձայնեցված գործունեությամբ: Ուսուցչի հետ մշտական անմիջական կապ չկա» [4, էջ 77]: Այս սահմանումն ավելի ճշգրիտ է բնութագրում խմբային ուսուցման եղանակի էությունը, սակայն չի արտացոլում սովորողների աշխատանքի կազմակերպման ձևը: Այսպես, որոշ հետազոտողներ (Վ.Վ.Կոտով, Տ.Մ.Նիկոլան, Գ.Ա.Ցուկերման և այլն) կարծում են,

որ համատեղ համաձայնեցված գործունեությունը կարելի է կազմակերպել նաև դասի ֆրոնտալ աշխատանքի ժամանակ [5, էջ 100]:

Խմբային աշխատանքի ամենատարածված ձևերից մեկը, թերևս, զույգերով աշխատանքն է: Այն հաջողությամբ օգտագործում են քիմիայի ուսուցիչները երեխաների քիմիական տարրերի նշանների ուսուցման առաջին իսկ օրերից, սովորեցնելով նրանց համագործակցել: Ամենից հաճախ դա կայուն զույգ է, որը ձևավորվում է մեկ սեղանի մոտ նստած երեխաներից [6, էջ 268]: Ձույգերով աշխատանքի դեպքում երեխաներն ուսումնական նյութը յուրացնում են ավելի արագ և ավելի բարձր որակով: Նրանց մոտ աճում է հետաքրքրությունը խմբում կատարվող վարժությունների նկատմամբ: Սկզբում այդ վարժությունները կարող են պարզ, հեշտ լինել: Ձույգերով աշխատելիս երեխաները սովորում են ուշադիր լսել ընկերոջ պատասխանը (քանի որ նրանք հանդես են գալիս որպես ուսուցիչ), մշտապես պատրաստվել պատասխանին (երեխայի համար շատ կարևոր է, որ նրան հարցնեն), սովորում են խոսել, պատասխանել, ապացուցել: Երեխան այս պահին կարող է անել այն, ինչն այլ ժամանակ չի թույլատրվում՝ ազատ շփվել ընկերոջ հետ, նստել ազատ: Երեխաներին նման աշխատանքը շատ է դուր գալիս:

Այն բանից հետո, երբ երեխաները զույգերով աշխատելու հմտություններ են ձեռք բերել, կարելի է կազմել աշխատանքային խմբեր: Դասարանի բաժանումը խմբերի աշխատանքի կազմակերպման համար խիստ կարևոր պահ է: Խմբերի ձևավորման հնարներն ու մեթոդները շատ են. ըստ ցանկության, պատահականորեն, որոշակի հատկանիշով, «առաջնորդի» ընտրությամբ, մանկավարժի ընտրությամբ: Խմբի մեջ միավորումը տեղի է ունենում փոխադարձ ընտրությամբ: Խմբերի բաժանման առաջադրանքն, ըստ ցանկության, կարող է տրվել առնվազն երկու տարբերակով՝ ա) բաժանվեք ըստ ... հոգանոց խմբերի, բ) բաժանվեք ... հավասար խմբերի [3, էջ 201]: Խումբը, որը ձևավորվում է պատահականորեն, բնութագրվում է նրանով, որ կարող է միավորել (եթե ոչ փոխադարձ ցանկությամբ, ապա կամք դրսևորելու դեպքում) երեխաներին, ովքեր այլ պայմաններում չեն համագործակցում միմյանց հետ, կամ նույնիսկ թշնամություն ունեն: Պատահաբար նույն խմբում աշխատանքը մասնակիցների մոտ զարգացնում է գործունեության պայմաններին և տարբեր գործընկերներին հարմարվելու ունակություն: Խմբերի ձևավորման այս

մեթոդն օգտակար է այն դեպքերում, երբ ուսուցչի առջև խնդիր է դրված սովորեցնել երեխաներին համագործակցել: Մեթոդը կարող է օգտագործվել դասարաններում, որտեղ աշակերտների միջև ընդհանուր առմամբ բարեկամական հարաբերություններ են ձևավորվել: Բայց ամեն դեպքում, յոթերորդ դասարանում սովորող դեռահասների հետ աշխատող քիմիայի ուսուցիչը պետք է ունենա միջանձնային կոնֆլիկտները լուծելու բավարար կարողունակություն: «Պատահական» խմբերի ձևավորման եղանակներն են. վիճակահանություն, միավորում նրանց, ովքեր նստում են կողք կողքի (նույն շարքում, դասարանի մեկ կեսի մեջ), տարբեր հնարների օգնությամբ և այլն: Ըստ որոշակի հատկանիշի բաժանումը կատարվում է ուսուցչի կամ որևէ աշակերտի կողմից: Կարելի է բաժանել անվան առաջին տառով (ձայնավոր-բաղաձայն), ըստ այն, թե տարվա որ եղանակին է ծնվել (չորս խմբի), աչքերի գույնով (շագանակագույն, մոխրագույն, կապույտ, կանաչ) և այլն: Բաժանելու այս եղանակը հետաքրքիր է նրանով, որ մի կողմից կարող է միավորել երեխաներին, որոնք հազվադեպ են շփվում միմյանց հետ, կամ ընդհանրապես հակակրանք են զգում, իսկ մյուս կողմից՝ որոշակի ընդհանուր հատկանիշ է տալիս, որը միավորում է խմբի անդամներին: Կա մի բան, որը նրանց համար ընդհանուր է և միաժամանակ տարբերում է մյուսներից [1, էջ 54]: Սա հիմք է ստեղծում խմբում միմյանց հուզական կապի միջոցով ընդունելու և մյուսներից որոշակի հեռավորության (ըստ էության, մրցակցություն) վրա լինելու համար: Շատ դեպքում ուսուցիչը խմբեր է ստեղծում որևէ կարևոր հատկանիշով՝ լուծելով որոշակի մանկավարժական խնդիր: Այն կարող է միավորել մտավոր հնարավորություններով, աշխատանքի նման տեմպով մոտ աշակերտներին կամ, ընդհակառակը, ստեղծել հավասար ուժերով խմբեր: Ընդ որում, խմբային աշխատանքի կազմակերպիչը կարող է բացատրել միավորման սկզբունքը, կարող է նաև խուսափել բացատրությունից [3, էջ 201]:

Անշուշտ, խմբերի աշխատանքը չի կարող գոյություն ունենալ առանց որոշակի կանոնների: Հնարավոր է սովորողներին առաջարկել համատեղ աշխատանքի պարզ կանոններ, որոնց օգնությամբ նրանք կկարողանան վերահսկել իրենց և կատարել անդրադարձ: Բարձր դասարաններում նման կանոններ (աշխատանքի գնահատման չափանիշներ) աշակերտները կարող են ինքնուրույն մշակել: Խմբի յուրաքանչյուր անդամ պետք է կարողանա ներկայացնել ընդհանուր և իր կատարած գործը: Շատ

կարևոր է ճիշտ ընտրել խմբային աշխատանքի առաջադրանքները: Առաջադրանքը պետք է հետաքրքրի խմբի անդամներին և ինքնադրսևորվելու հնարավորություն տա և լինեն այնպիսին, որ խմբի անդամների համաձայնեցված աշխատանքը տա ավելի լավ արդյունք, քան մասնակիցներից յուրաքանչյուրը, եթե միայնակ աշխատեր: Անհրաժեշտ է օգտագործել.

- ա) առաջադրանքներ, որոնք պահանջում են մեծ ծավալի աշխատանքի կատարում,
- բ) առաջադրանքներ, որոնք պահանջում են բազմազան գիտելիքներ և հմտություններ, որոնց ամբողջությանը անհատապես չի տիրապետում խմբի երեխաներից ոչ մեկը, բայց տիրապետում է խումբն ընդհանուր առմամբ,
- գ) առաջադրանքներ ստեղծագործական մտածողության զարգացման համար, որտեղ պահանջվում են օրիգինալ գաղափարներ, մոտեցումներ:

Աշխատանքի բովանդակությունը պետք է հետաքրքիր լինի երեխաների համար: Առաջադրանքները պետք է բարդության մակարդակով երեխաներին հասանելի լինեն, լինեն խնդրահարույց, ստեղծեն որոշակի ճանաչողական դժվարություն, հնարավորություն ընձեռեն առկա գիտելիքների ակտիվ օգտագործման համար: Անշուշտ, աշխատանքի կազմակերպման խմբային ձևը շատ առավելություններ ունի: Բարձրանում է դպրոցականների ուսումնական և ճանաչողական մոտիվացիան, իջնում նրանց տագնապայնության մակարդակը, ինչ որ խնդիրներ լուծելու անկարողության, անհաջողության վախը: Խմբում սովորելու, գիտելիքի յուրացման և արդիականացման արդյունավետությունն ամենաբարձրն է, բարելավվում է դասարանի հոգեբանական մթնոլորտը, ինչպես նաև երեխաների միջանձնային հարաբերությունները: Սակայն խմբային աշխատանքն ունի նաև դժվարություններ կամ որոշ թերություններ: Չնայած խմբային աշխատանքում առաջատար դերը սովորողներն են խաղում, սակայն աշխատանքի արդյունավետությունը մեծապես կախված է ուսուցչի ջանքերից և հմտությունից: Խմբային աշխատանքը պետք է նախ սովորեցնել: Որպեսզի դրան հասնենք, ուսուցիչը պետք է ծախսի որոշ դասերի ուսումնական ժամանակը, ինչը քիմիայի դեպքում չափազանց սուղ է: Առանց պայմանների պահպանման՝ խմբային աշխատանքն արդյունավետ չի լինում: Խմբի աշխատանքի կազմակերպումը ուսուցչից պահանջում է հատուկ հմտություններ,

ջանքեր: Խմբերի չմտածված բաժանման դեպքում որոշ աշակերտներ կարող են օգտվել «ուժեղ» դասընկերների աշխատանքի արդյունքներից:

Յուրօրինակ կազմակերպումը, նոր հնարները կարևոր գործոններ են, որոնք նպաստում են ուսուցման որակի բարձրացմանը, սակայն ընտրության իրավունքը միշտ մնում է ուսուցչին: Այսօրվա դրությամբ խմբային լիարժեք աշխատանքների իրականացմանն օգնում է համակարգային-գործնական մոտեցումը: Համակարգային-գործնական մոտեցումն արդյունավետ է միայն այն դեպքում, եթե մանկավարժն ինքնուրույն ձգտում է այն ներդնել իր դասերում, փորձում է տիրապետել տեսությանն ու պրակտիկային: Իսկ դա հնարավոր է միայն այն դեպքում, երբ մարդը չի վախենում հեռանալ կարծրատիպերից և վերակառուցել ուսուցման գործընթացը՝ հասնելով նոր արդյունքի, եթե նա բաց է շփման համար և ընկալում է այն, ինչ իրեն ասում են փորձառու գործընկերները [2, էջ 96]:

Մանկավարժական գրականության մեջ առկա են «խմբային դաստիարակչական գործունեություն» և «խմբային աշխատանք» հասկացություններ: Դաստիարակչական գործունեությունը ենթադրում է արժեքային արդյունք կամ արժևորում, որը ներդրված է նպատակում, որոշվում է սովորողի կողմից մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրելով կամ արժեքների ներքնայնացմամբ: Խմբային աշխատանքը կենտրոնացած է առարկայից արդյունքի հասնելու վրա, որը միշտ ներկայացված է գիտելիքների, հմտությունների և փորձի տեսքով: Վ.Կ.Դյաչենկոն կարծում է, որ խմբային ուսուցման կազմակերպչական կառուցվածքը կարող է լինել համակցված, այսինքն պարունակել տարատեսակներ՝ խմբային, զույգերով, անհատական: Ընդ որում, գերիշխող նշանակություն ունի խմբային շփումը [8, էջ 108]: Ն.Մ.Բորիսկոյի հետազոտությունները ցույց են տվել, որ խմբերի օպտիմալ կազմը պետք է լինի 5-ից 7 սովորող: Երբեմն ավելի հաջող աշխատանք է կազմակերպվում 3-5 հոգանոց խմբերով: Այդպես ավելի հեշտ է կառավարել դասարանը: Համատեղ աշխատանքի համար կոմպլեկտավորվում են առաջադիմությամբ և աշխատանքի տեմպով մոտ սովորողների խմբեր: Խմբերի կազմը որոշելիս կարևոր է հաշվի առնել սովորողների միջև հարաբերությունները [9, էջ 496]: Խմբային աշխատանքի համար անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որպեսզի խմբի յուրաքանչյուր անդամ կարողանա արտահայտել իր տեսակետը, ինչպես նաև դաստիարակել լսելու և դիմացինի

տեսակետը, կարծիքն ընդունելու, հանդուրժելու ունակություն: Աճում է և անհատական օգնությունը յուրաքանչյուր սովորողին ինչպես ուսուցչի, այնպես էլ խմբի անդամների կողմից: Սովորողների գիտելիքներն արդիականանում են, կոնկրետանում և ամրագրվում հենց իրենց դասընկերոջը բացատրելու ընթացքում Գ.Կ.Սելևկոն առանձնացնում է ուսումնական գործունեության խմբային աշխատանքի կազմակերպման գործընթացի հետևյալ փուլերը.

1) խմբային առաջադրանքի կատարման նախապատրաստում.

- ուսումնաճանաչողական խնդրի առաջադրում,
- աշխատանքի կատարման հաջորդականության հրահանգավորում,
- ըստ խմբերի դիդակտիկ աշխատանքային նյութերի բաշխում,

2) խմբային աշխատանք.

- ծանոթացում առաջադրանքի հետ, խմբի աշխատանքի պլանավորում;
- խմբի ներսում առաջադրանքի բաղադրիչների բաշխում,
- անհատական հանձնարարությունների կատարում;
- խմբային աշխատանքի անհատական արդյունքների քննարկում: Խմբերում առաջադրանքի ընդհանուր քննարկում (լրացում, ճշգրտում, դիտողություններ և ընդհանրացումներ),

3) եզրափակիչ մաս.

- հաղորդագրություն խմբերի աշխատանքների արդյունքների մասին;
- ճանաչողական խնդրի վերլուծություն, անդրադարձ,
- ընդհանուր եզրակացություն խմբային աշխատանքի և յուրաքանչյուր խմբի ձեռքբերման մասին [10, էջ 556]:

Խմբերի ուսումնական գործունեությունը ենթադրում է մասնակիցների ակտիվ շփում: Միևնույն ժամանակ, պետք չէ դասարանում բացարձակ լռություն պահանջել, քանի որ սովորողները բուռն քննարկումներ են ունենում այս կամ այն հարցի շուրջ: Հաշվի առնելով այս առանձնահատկությունը, պետք է ուսուցման գործընթացում կազմակերպել հատուկ սոցիալականացնող, դաստիարակող իրավիճակներ: Խոսքը վերաբերում է յուրաքանչյուր սովորողին միջանձնային հարաբերությունների համակարգում ընդգրկելուն, դասընկերների շրջանում ինքնահաստատման հարցում աշակերտին կոնկրետ օգնությանը: Մյուս կողմից, խմբային աշխատանքի ժամանակ

սովորողների միջև ստեղծվում են փոխադարձ կախված պատասխանատվության հարաբերություններ և հասարակական վերահսկողություն, ծնվում է հասարակական կարծիք, զարգանում է ուսանողների ինքնագնահատականը, առաջանում է կոլեկտիվ նվաճումների համատեղ ապրման գործընթաց՝ որպես ուսումնական գործունեության կարգավորող: Այս առումով օրինաչափ է դառնում, որ համագործակցությունը թույլ է տալիս օգտագործել ստացած գիտելիքներն ու քննադատական մտածողության կարողություններն ու հմտությունները ճանաչողական գործունեության մեջ [8, էջ 109]: Խմբային ձևով ուսուցման կողմնակիցները փոքր խմբերով աշխատանքում կարևորում են հետևյալ առանձնահատկությունները. խմբի յուրաքանչյուր անդամի պատասխանատվություն սեփական և խմբի հաջողությունների համար, սոցիալական հմտությունների ձևավորումը: Սկզբունքորեն, այս ամենը համահունչ է ըստ Գ.Կ.Սելևկոյի խմբային աշխատանքի կազմակերպման փուլերին: Ուսուցումն իրականացվում է փոքր խմբերով, որը բաղկացած է տարբեր մակարդակի ունակություններով չորս-հինգ սովորողներից:

Այսպիսով, ճիշտ պլանավորված և կազմակերպված խմբային աշխատանքի ժամանակ բոլոր սովորողները հետաքրքրված աշխատում են՝ ուսումնական գործընթացում մտավոր գործունեության մեջ համատեղելով ամբողջ նյութի խմբային և անհատական յուրացումը: Ուսուցիչը համոզվում է, որ յուրաքանչյուր աշակերտ իր կարծիքն է ասել, և բոլորը եկել են միասնական ընկալման կամ որոշման: Խմբային աշխատանքի արդյունքում ստացվել են քիմիայի ուսուցման գործընթացում խմբային աշխատանքի արդյունավետությունը հաստատող տվյալներ: Սովորողը ազատ և ակտիվ շփման միջոցով կազմակերպված համատեղ խմբային աշխատանքի միջոցով հասնում է ուսումնական նյութի յուրացմանը:

Գործնական համատեքստ

Փոքր խմբերով աշխատանքում անմիջական հաղորդակցման ժամանակ մարդիկ աշխատելիս լսում և տեսնում են միմյանց: Այդ հաղորդակցումը հիմնականում լինում է բանավոր խոսքով: Մարդկանց միջև անմիջական հաղորդակցման երեք տեսակ գոյություն ունի: Քիմիայի ուսումնական գործընթացում հաճախակի եմ օգտագործում ուսուցման կազմակերպման գույգային ձևը: Այն հարմար է կազմակերպական տեսանկյունից, չի առաջացնում լրացուցիչ խնդիրներ, սակայն թույլ է տալիս արտահայտվել և լինել լսողի դերում, հարմար է փոխադարձ գնահատման համար: Խմբային ուսումնական պարապմունքների ժամանակ մեկը կարող է միանգամից հաղորդակցվել մի քանի մարդկանց հետ: Ուսումնական գործընթացում այսպիսի ձևի օգտագործումը կոչվում է ուսուցման կազմակերպման խմբային ձև: Մեր ժամանակներում հասարակությունը կարիք ունի որակյալ ուսուցման: Ուսուցման կազմակերպման խմբային ձևը ավելի շատ է համապատասխանում հասարակության պահանջներին և կարող է օգնել յուրաքանչյուրին՝ ապահովելու կրթական բարձր որակ: Խմբային ուսումնական պարապմունքների ժամանակ օգտագործվում են խմբային ուսուցման կազմակերպման տարբեր եղանակներ:

Քիմիայի ուսուցման խմբային գործընթացը սովորողի մտավոր, հոգևոր սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացման միջոց է: Քիմիան փորձարարական գիտություն է և ուսումնասիրում է նյութերն ու նրանց հատկությունները: Յուրաքանչյուր անհատ երևութներն ու նյութերը ուսումնասիրելու իրեն բնորոշ կերպն ու տեմպն ունի: Խմբային աշխատանքը թույլ է տալիս հարմարվել սովորողների ուսումնական գործունեության տեմպին: Հաջող ուսուցման լավագույն նախապայմանը ուսումնասիրվող առարկայի նկատմամբ հետաքրքրությունն է և քիմիայի ուսուցչի հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ կարողանա հետաքրքրել սովորողներին գիտելիք ձեռք բերելու գործընթացով, սովորեցնել աշակերտին դիտարկել, հարցեր տալ, ենթադրություններ անել, վարկածներ առաջ քաշել, փորձել գտնել իր հարցերի պատասխանը կամ վարկածի հաստատումը, ժխտումը, բացատրել ստացված արդյունքները և կատարել հետևություններ, հիմնավորել դրանք: Մեզ շրջապատող անվերջ փոփոխվող աշխարհը նյութերից է կազմված և նյութը, նրա հատկությունները ճանաչելու համար պետք է հանգամանալից

ուսումնասիրել այն: Փորձն իրականացնելու և դրա վերաբերյալ գրանցումներ կատարելու հմտությունները սովորողների մոտ ձևավորվում են աստիճանաբար: Դրանք լուրջ աշխատանք են պահանջում և բնագիտական առարկաների ուսուցման խիստ կարևոր մասն են: Այդ կարողությունների ձևավորման համար խմբային աշխատանքները իդեալական են: Դրանք օգնում են սովորողին քննարկել ընկերների հետ տարբերակներ, գալ ընդհանուր եզրակացության կամ անհամաձայնության: Որոշ քիմիական երևույթներ ընթանում են ակնհայտ նշաններով՝ գույնի, հոտի փոփոխություն, գազի պղպջակների կամ նստվածքի անջատում, ինդիկատորի վրա ազդեցություն և այլն: Աշակերտի կողմից ինքնուրույն կատարված փորձի և դիտումների անհրաժեշտությունը բնության ճանաչողության գործում չափազանց մեծ է, և ուսուցչի կողմից կատարվող ցուցադրումները, որքան էլ խնամքով ու որակով կատարվեն, չեն կարող փոխարինել աշակերտների կողմից ինքնուրույն կատարվող աշխատանքներին: Ցուցադրումների ժամանակ աշակերտը մնում է պասիվ դիտողի դերում, իսկ աշխատանքն ինքնուրույն կատարելու ընթացքում հետազոտման պրոցեսին մասնակցում են աշակերտի բոլոր զգայարանները: Աշակերտը ոչ միայն լսում է ուսուցչի բացատրությունները և դիտում փորձը, այլև շոշափում է նյութը, գործիքները, հոտ է քաշում, ուսումնասիրում է, ձեռք է բերում գործնական հմտություններ, աշխատանքային կուլտուրա: Ինքնուրույն աշխատանքի ընթացքում, եթե այն ճիշտ է կազմակերպված, երեխայի մեջ զարգանում է գլխավորը երկրորդականից, էականը ոչ էականից տարբերելու կարողություն: Աշակերտները վարժվում են խմբով աշխատելուն, նյութերի և լաբորատոր ամանեղենի նկատմամբ խնամքով վերաբերմունքին և ընկերական փոխօգնությանն ու համագործակցությանը: Աշակերտների մեջ առաջանում է վստահություն իրենց գիտելիքների նկատմամբ, գիտակցական վերաբերմունք և երևույթներն ու փաստերը գիտականորեն քննարկելու, ճիշտ եզրահանգումներ կատարելու կարողություններ ու հմտություններ:

Ուսուցիչը խմբերին այդ նպատակով պետք է տրամադրի անհրաժեշտ ժամանակ և ընթացակարգեր: Քննարկումները հնարավորություն են ընձեռում ամրապնդելու խումբը՝ պահպանելով արդյունավետ փոխհարաբերությունները խմբի ներսում: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը, մղում են

նրանց սոցիալական հատկությունների շարունակական կիրառման: Խմբային գործընթացն այն գործողությունների հաջորդականությունն է, որոնք կատարվում են կոնկրետ ժամանակահատվածում, կոնկրետ նպատակի հասնելու համար: Այս պարագայում խմբային գործընթացը վերաբերվում է խմբի անդամների անդրադարձին, որի ընթացքում կարևորվում են խմբի անդամների ջանքերի բարելավումը և կատարելագործումը՝ խմբային նպատակներին հասնելու և արդյունավետ աշխատանքային հարաբերություններ հաստատելու գործում:

Քիմիական խնդիրների լուծման ուսուցման ժամանակ գործողության եղանակների վերաբերյալ գիտելիքների կիրառման կարողությունները կարելի է համարել ձևավորված այն դեպքում, երբ սովորողը հաղթահարում է համակցված խնդիրների լուծումը, ընտրում է լուծման ձեռնարկ, ռացիոնալ եղանակը, բանավոր և գրավոր խոսքում ճիշտ է ներկայացնում, մեկնաբանում իր կողմից կատարված գործողությունները: Խմբային աշխատանքի իրականացումը նպաստում է այդ կարողությունների ձևավորմանը: Քիմիական փորձի կատարման, դիտարկման վերաբերյալ գիտելիքների կիրառման կարողությունները կարելի է համարել ձևավորված, եթե սովորողը կարողանում է ճիշտ (առանց էական սխալների) կատարել դպրոցական ծրագրով նախատեսված փորձերը, ինքնուրույն իրականացնել անհրաժեշտ դիտարկումները, հասնել դրված նպատակին և կատարել եզրահանգումներ, պահպանում է նյութերի և լաբորատոր սարքերի հետ աշխատելու անվտանգության կանոնները, չի խախտում քիմիական լաբորատորիայում անվտանգ վարքի կանոնները և աշխատանքի վայրում պահպանում է մաքրություն, կարգ ու կանոն, իսկ փորձի կատարման ընթացքում ուսուցչի կամ ընկերների օգնության կարիքը չի զգում: Քիմիական գիտելիքների և գործողության եղանակների կոնկրետ տեսակների կիրառման կարողությունները կարելի է համարել ձևավորված, եթե սովորողը ինքնուրույն և գիտակցված, ուսուցչի հանձնարարության համապատասխան կամ սեփական նախաձեռնությամբ իրականացնում է գիտելիքների «տեղափոխում», դրանց մեջ հաստատում է նոր ներառարկայական, երբեմն նաև միջառարկայական կապեր, նոր օրինակների օգնությամբ կոնկրետացնում է:

Ամփոփում

Այսպիսով, խմբային համատեղ աշխատանքը սովորողներին միավորում է, նպաստում է դեռահասի ինքնագնահատականի ձևավորմանը: Խմբում երեխաներին հնարավորություն է ընձեռվում գնահատել խմբի և իր սեփական գործունեությունը, արտահայտել իրենց կարծիքը, լսել ուրիշների կարծիքը, նրանց մոտ մշակվում է հենց թիմում աշխատելու ունակություն, դպրոցականները սովորում են լսել խմբի իրենց ընկերների կարծիքը, վերլուծել ասվածը, ինչ-որ բանի հետ համաձայնել և բացատրել, թե ինչու է ինքն այդպես կարծում, իսկ եթե ինչ-որ բանի հետ համաձայն չէ, ապա համապատասխանաբար անհամաձայնության համար փաստարկներ բերել, ինչը նպաստում է տրամաբանական, քննադատական մտածողության զարգացմանը: Քիմիայի դասի ընթացքում սովորողների խմբային աշխատանքը կազմակերպվում է՝ հաշվի առնելով հետևյալ պայմանները.

- խմբային առաջադրանքի կատարման նախնական նախապատրաստում, ուսուցչի կողմից ուսումնական խնդրի առաջադրում և հրահանգավորում,
- խմբում ուսումնական առաջադրանքի կատարման պլանի քննարկում և կազմում, լուծման ուղիների սահմանում, պարտականությունների բաշխում,
- խմբում առաջադրանքի կատարման փոխհամաձայնեցում, աշխատանքի բաժանում և փոխադարձ ստուգում,
- խմբային աշխատանքի վերջնական արդյունքների քննարկում, լրացուցիչ տեղեկատվություն, լրացում, ուղղում և եզրակացությունների ձևակերպում:
- խմբում սեփական աշխատանքի անհատական ինքնագնահատում և փոխադարձ գնահատում:

Հարկ է նշել, որ խմբերի ուսումնական գործունեությունը ենթադրում է սովորողների շփում, հաղորդակցում, այսինքն՝ պետք է խմբային աշխատանքների համար կազմակերպել հատուկ սոցիալականացնող, ուսուցման ընթացքում դաստիարակող իրավիճակներ: Ուսումնական գործունեության խմբային ձևերը զարգացնում են աշակերտների միջանձնային հարաբերությունները, թույլ են տալիս հաշվի առնել կոնկրետ աշակերտի անհատական առանձնահատկությունները և սոցիալական կարգավիճակը, ինքնահաստատվել դասընկերների միջավայրում, բարձրացնում են սովորողների ինքնագնահատականը և խմբային նվաճումների փորձը:

Գրականություն

1. Светловская Н.Н., Пичеол Т.С. Как помочь детям, которые не хотят учиться. – М.:Аркти, 2007. – 54 с.
2. Витковская И.М. Обучение школьников в совместной деятельности. – Псков, 2000: - 96 с.
3. Курятов В.М. Как организовать обучение в малых группах. – СПб.: М.: Педагогика, 2000: - 201 с.
4. Лийметс Х.Й. Групповая работа на уроке. – М.: Знание, 1975. - 77 с.
5. Котов В.В. Организация на уроках коллективной деятельности учащихся. /Пособие по спецкурсу. Рязань, 2007. 100 с.
6. Цукерман Г.А. Виды общения в обучении. - Томск: Пеленг, 1993.- 268 с.
7. Чередов И.М. Процесс обучения: методы, формы: учеб. пособие / И.М.Чередов; Омск. гос. пед. ун-т. - Омск: Изд-во ОмГПУ, 1997. - 76 с.
8. Дьяченко В.К. Новая дидактика. – М.: Народное образование, 2001. – С. 100-110.
9. Борытко Н. М. Педагогика: учеб. пособие для студ. высш. учеб. заведений / Н.М.Борытко, И.А.Соловцова, А.М.Байбаков; под ред. Н.М.Борытко. – М.: Издательский центр «Академия», 2007. – 496 с.
10. Селевко Г. К. Энциклопедия образовательных технологий. В 2-х т. Т. 1. –М.: Народное образование, 2005. – 556 с.